2023, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (621)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով

*(31 դեկտեմբերի 2022 թ.)*

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, Արցախ եւ ի սփյուռս,*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ:*

*Նոր տարվա սեմին ենք՝ մեր սպասումներով ու հույսերով, նաեւ անհանգիստ սրտով ու մտահոգություններով: Անցնող տարին մեր ժողովրդի համար զերծ չեղավ տագնապներից, ունեցանք նոր զոհեր ու կորուստներ: Հայրենիքը տակավին կանգնած է անվտանգային մարտահրավերների առջեւ. թշնամական նշանառության տակ են մեր սահմաններն ու խաղաղ բնակավայրերը: Արցախաբնակ Մեր զավակները աննկուն ոգով շարունակում են պայքարել հանուն իրենց անկախ կյանքի իրավունքի պաշտպանության՝ դիմագրավելով բազում նեղությունների՝ նաեւ Լաչինի ճանապարհի արգելափակումով պայմանավորված: Այսպիսի դժվարին իրավիճակում մենք չենք կարողացել մեր ազգային ներուժով լիարժեք միաբանվել հայրենիքը զորացնելու եւ ծանր կացությունից դուրս բերելու համար: Այսօր աշխարհին պեկոծող աշխարհաքաղաքական սուր դիմակայությունները, որ տեղիք են տվել հոգեւոր, սոցիալական եւ տնտեսական բազմազան խնդիրների, նույնպես իրենց անմիջական ներգործությունն են ունենում մեր տարածաշրջանում ծավալվող զարգացումների վրա:*

*Այդուհանդերձ, առ Աստված ապավինությամբ Ամանորի այս երեկո մենք բարեմաղթանքներ ենք ուղղում միմյանց: Բարեմաղթանքներ՝ աշխարհի խաղաղության, մեր հայրենիքի՝ Հայաստանի եւ Արցախի ապահովության ու առաջընթաց կյանքի: Մեր հոգում առավելաբար ակնկալիքներն են մեր կորուստների վերականգնման, հառնած խնդիրների հաղթահարման եւ ազգային մեր կյանքի նորոգության:*

*Սիրելինե՛ր, քրիստոնյայի առաքելությունն է ապրել հույսով եւ լինել լավատես՝ համոզումով, որ, ինչպես ասում է առաքյալը, «հույսը երբեք չի ամաչեցնում» (Հռ. Ե 5):*

*Պետությունները կործանվում են, ժողովուրդներն անհետանում ոչ թե փորձությունների ծանրությունից, այլ հույսի սպառումից, ապագայի հանդեպ տեսլականի եւ այն կյանքի կոչելու վճռականության բացակայությունից: Մեր ժողովրդի հարագնա երթը եղել է ու պիտի շարունակի մնալ քրիստոսախարիսխ հավատքի, հույսի ու լավատեսության պատմություն: Այս վստահությամբ ապրենք ու գործենք՝ ամրորեն կառչած մեր ինքնությանը, մեր լինելության անփոխարինելի գրավականներին՝ հայրենիքին, մեր լեզվին ու մեր հավատքին: Հեռու վանենք մեզանից վհատությունը, ապազգայնությունն ու անտարբերությունը եւ հուսառատությամբ համախմբվենք ազգային ու պետական շահերի շուրջ: Գիտակցենք, որ այս է ուղին մեր վիրավոր հայրենիքի ապաքինման, Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության, հայրենիք–սփյուռք միասնականությամբ լուսավոր գալիքի երաշխավորման եւ ազգիս հարատեւության: Ուստի՝ առաքելական հորդորով «արթո՛ւն լինենք եւ սիրո ու հավատի զրահները հագնենք եւ փրկության հույսի սաղավարտը դնենք» (Ա Թես. Ե 8–9):*

*Հայրապետիս աղոթքն է, որ ամենակարող Աստված խաղաղության մեջ պահի մեր հայրենիքը եւ անփորձանք՝ հայրենյաց պաշտպան մեր զինվորներին: Տիրոջ օրհնությունն ու մխիթարությունն ենք հայցում ծանր կորուստներ կրած ընտանիքներին, ապաքինություն՝ վիրավորներին, շուտափույթ վերադարձ՝ գերեվարված ու անհայտ կորած մեր զավակներին:*

*Ամանորի սեմին միասնաբար հայցենք Ամենակալից, որ նոր տարում մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս պահպանի խաղաղ ու ապահով, սիրով միասնական եւ շնորհի հայրենաշեն ու ազգաշահ իրագործումներ: Թող Տերը մեր կյանքում առատացնի հույսը մեր հայրենիքի ու ազգի ապագայի հանդեպ: Եվ թող Աստծու սերն ու շնորհները այսօր եւ միշտ ուղեկից լինեն մեզ եւ ամենքին:*

*Օրհնյալ, բարի Նոր տարի:*

## Հայրապետական Սուրբ Պատարագ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով

**Հունվարի 6-ին մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության հոգեւորոգ տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:**

**Հայրապետական խաչվառազարդ թափորը «Խորհուրդ խորին» շարականի հանդիսավոր երգեցողության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սուրբ Տրդատի մատուռից առաջնորդեց դեպի խորան: Սուրբ Պատարագին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը եւ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան ու Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպս. Ժամկոչյանը:**

**Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» կենարար ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը եւ տոնի առիթով հղեց իր պատգամը:**

**Հավարտ Սուրբ Պատարագի՝ կատարվեց Ջրօրհնեք, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ սրբալույս մյուռոնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն է ժնեւահայ բարերար Հակոբ Ավագյանը:**

**Ջրօրհնեքի վերջում Վեհափառ Հայրապետը վերստին իր օրհնությունն ու Սուրբ Ծննդյան փրկարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:**

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով*

(Երեւան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, 6 հունվարի 2023 թ.)



*Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

*«Նորոգվեցեք ձեր մտքով եւ հոգով ու հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու»*
(Եփ. Դ 23–24):

*Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ ի Հայաստան, Արցախ եւ ի սփյուռս,*

*Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի հրաշազարդ այս օրը, համախմբված մեր եկեղեցիներում, օրհնաբանում ենք նորածին Փրկչին՝ միմյանց փոխանցելով փրկավետ ողջույնը. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:*

*Ավելի քան երկու հազար տարի Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսը հնչում է աշխարհում, արձագանքում մարդկանց հոգիներում՝ որպես անզուգական հրավեր՝ Քրիստոսով նորոգվելու, խաղաղություն հաստատելու, սերն առատացնելու: «Նորոգվեցեք ձեր մտքով եւ հոգով ու հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու»,– պատգամում է առաքյալը՝ ներշնչված Տիրոջ Սուրբ Ծննդյան ավետիսով: Արդարեւ, Աստվածորդին աշխարհ եկավ՝ մեղանչական մարդուն ցույց տալու փրկության ճանապարհը, որը բացվում է Քրիստոսով նորոգվածների համար: Այս ուղիով են ընթանում Փրկչին հավատացող ու փորձությունների առջեւ չընկրկող հոգիները եւ մեղքի ու չարյաց դեմ աներկբա մարտնչողները:* ➥ էջ 2

# Հայրապետական Սուրբ Պատարագ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով

↩ էջ 1

*Քրիստոսի Սուրբ Ծննդյան շնորհները պարգեւում են մարդկությանը օրինյալ կյանք՝ խարսխված աստվածպաշտության, բարության, ճշմարտության ու արդարության վրա, հույսով ու լավատեսությամբ են զինում կորուստներից ու ցավերից վշտահար ու հուսաբեկ հոգիներին, ապաքինում եւ լիացնում բարուց ու սիրուց ամայացած սրտերը եւ զորացնում՝ դժվարություններին դիմակայելու, անգամ անվճռելի թվացող ճգնաժամերն ու պատուհասները հաղթահարելու:*

*Փրկչի Ծննդյամբ մարդկության կյանքում հնչող նորոգության հրավերի անտեսումը, Աստվածորդու պատվիրաններին հակառակ ընթացքը, սակայն, չարիք ու ավեր են սփռում եւ այսօր էլ պատճառ են դառնում հասարակության մեջ, ընտանիքներում գժտությունների ու անհանդուրժողության, ազգերի ու պետությունների միջեւ հակամարտության ու թշնամանքի: Հիրավի, առաքյալի խոսքի համաձայն, «մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի միջոցով» (Հռ. Զ 23):*

*Սիրելինե՛ր, Աստվածորդու հրաշափառ Սուրբ Ծնունդը առանձնակի քաջալերությամբ է համակում, հավատքով գոտեպնդում քրիստոսասեր մեր ժողովրդին, որ վերջին տարիներին ենթարկվեց նոր փորձությունների: Արցախյան պատերազմի եւ ամիսներ առաջ Հայաստանի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների արհավիրքներում մենք վերստին կրեցինք ծանր կորուստների ցավն ու տառապանքը: Մեր զավակները հերոսաբար զոհվեցին հանուն հայրենիքի, հազարավորները հաշմանդամ դարձան: Մեր տասնյակ զավակներ գերության մեջ են, տակավին կան անհայտ կորածներ: Տեւական ժամանակ արգելափակված է Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհը, ինչը հանգեցրել է հումանիտար աղետի: Այս ծանր իրավիճակում մեր դեմ ծառացած հիմնախնդիրները հաղթահարելու համար մենք կարիքն ունենք ճշմարիտ նորոգության, սրտով, հոգով, մտքով մաքրվելու, Քրիստոսով վերափոխվելու եւ միախորհուրդ ու միակամ դառնալու ազգի եւ հայրենիքի առջեւ մեր հանձնառությունների մեջ: Այսպիսի նորոգությամբ է, որ կարող կլինենք հայրենական մեր կյանքից բացառել ամենայն չարն ու անարդարը, վախի, բռնության, ատելության ու հարմարվողականության կործանարար դրսեւորումները եւ հայրենիքի բարվոք ապագայի տեսլականով համախմբել ազգային ողջ ներուժը, ամրագրել միմյանց հանդեպ հարգանքն ու սերը, վստահության հաստատուն հիմքերի վրա խարսխել Հայաստան–Սփյուռք գործակցությունը: Պատմական փորձառությամբ գիտենք, որ նեղություններից հաղթանակած ենք դուրս եկել, երբ եղել ենք միաբանված ընդհանրական նպատակների շուրջ: Քրիստոսով նորոգված, Քրիստոսով միասնական, Աստծու շավիղներով քայլելով, մենք, ինչպես առաքյալն է ասում, մեզ պաշարած փորձություններից այսօր էլ հաղթական պիտի դուրս գանք (հմմտ. Հռ. Ը 37):*

*Սիրելի՛ զավակներ Մեր, Աստծու օգնականությունը խնդրելով՝ ամուր մնանք առ Փրկիչ մեր Տերը հավատքի մեջ եւ աներկմիտ սրտով պահպանենք մեզանում Սուրբ Ծննդյան հուսաբեր տոնի հոգեւոր ապրումը: Զորանանք հայրենիքի սիրով եւ ամեն կարելի հնարավորությամբ սատարենք Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում դժվարություններ կրող մեր քույրերին ու եղբայրներին: Գիտակցենք, որ պատասխանատու ենք հայրենիքի ու սերունդների առջեւ եւ վտանգի չենթարկենք մեր անկախ պետականությունը: Մեր բարի գործերը դարձնենք հիմերը մեր վերելքի ու հաղթության եւ միասնաբար կերտենք մեր հայրենիքի ու ժողովրդի ապահով, լուսավոր գալիքը:*

*Սուրբ Ծննդյան Պատարագի այս սրբազան պահին հայրապետական Մեր խոսքն ենք հղում խրոխտ ու անվեհեր Արցախի հավատավոր Մեր զավակներին: Սիրելի՛ արցախցիներ, մեր ժողովրդի մտածումներն ու հայացքները այս օրերին առավելաբար ձեզ են ուղղված: Դուք, որ դժվարությունների առջեւ երբեք չեք ընկրկել ու չեք նահանջել, այսօր էլ տոկունությամբ շարունակում եք հերոսաբար պայքարել հանուն ձեր ազատ ու անկախ կյանքի, հանուն պատմական արդարության վերականգնման: Ձեր քաջ նախնյաց փառավոր օրինակով հաստատուն ու աննկուն մնացեք հայրենի հողում ապրելու եւ արարելու վճռականության մեջ: Մեր Սուրբ Եկեղեցին աշխարհասփյուռ իր թեմերով ձեզ հետ է, աջակից ու զորակից ձեզ: Ձեր հիմնարար իրավունքների պաշտպանության արդար պահանջը հաղթանակելու է համայն հայության ջանքերով եւ միջազգային հանրության սատարումով: Հավատում ենք, որ Աստծու ողորմածությամբ մեր ժողովուրդը իրեն պատած խավարի մեջ պիտի լույս ծագեցնի եւ դիմագրավի իր կյանքում ծառացած լրջագույն մարտահրավերներին:*

*Այս զգացումներով ու մտածումներով, Սուրբ Ծննդյան ավետիսով Մեր ողջույնն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու նվիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին՝ մաղթելով Աստծու զորակցությունը տերունական ծառայության մեջ: Ի Քրիստոս եղբայրական սիրով ողջունում ենք քույր Եկեղեցիների պետերին՝ հայցելով մանկացյալ Փրկչի օրհնությունն իրենց աստվածապատվեր առաքելության եւ հավատավոր հոտին: Հայրապետական Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ համայն հավատավոր Մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս:*

*Սուրբ Ծննդյան այս շնորհազարդ առավոտ սրտագին աղոթքով խնդրում ենք ամենակալ Տիրոջը, որ բեթղեհեմյան աստղալույսը հարատեւ շողարձակի մեր ազգային կյանքի երկնակամարում, որպեսզի մենք, Փրկչին ապավինած, հաստատենք մեր ընթացքը սիրո, համերաշխության ու միասնականության շավիղներում: Թող Սուրբ Ծննդյան կենարար խորհրդով խաղաղություն լինի աշխարհին ու համայն մարդկությանը: Թող հավատքով պայծառացած՝ աշխարհասփյուռ ազգս հայոց զորացնի իր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը, իրականություն դարձնի իր նվիրական իղձերը եւ փառավորի մարդեղացյալ Փրկչին՝ զոհությամբ ձայնելով.*

*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,*
*ձեզ եւ մեզ մեծ աւետիս:*

# Սուրբ Ծննդյան ճրագալույցի Պատարագ

Հունվարի 5-ին Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության բերկրալի տոնի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում մատուցվեց ճրագալույցի Սուրբ Պատարագ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները եւ ուխտավոր հայորդիներ: Պատարագիչն էր Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը:

Մինչ Սուրբ Պատարագը կատարվեց երեկոյան ժամերգություն, այնուհետեւ ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագ ընթերցեց Դանիելի մարգարեությունը: Սուրբ Պատարագի ընթացքում Վազգեն սրբազանը, իր քարոզում ներկայացնելով Սուրբ Ծննդյան խորհուրդը, անդրադարձ կատարեց մարդ–Աստված հարաբերությանը. «Թեեւ չենք բացառում մարգարեների, Սուրբ Գրքի մեկնիչների, աստվածաբանների կարեւորությունը՝ Աստծու խոսքը մեզ առավել դյուրին մատուցելու առումով, բայց այսօր կարեւոր է յուրաքանչյուրիս անհատական հաղորդակցությունն Աստծու հետ»: Այս առնչությամբ պատարագիչ սրբազանը հորդորեց ներկաներին թոթափելով աշխարհիկ մտածումները եւ հեռու վանելով մարդու հոգին ու կյանքը մաշող խոհերը՝ խոսել Տիրոջ հետ՝ դեպի երկինք բարձրացնելով մեր անկեղծ աղոթքները:

Վազգեն սրբազանը, անդրադառնալով նաեւ մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին, ընդգծեց, որ առկա փորձությունները հնարավոր է հաղթահարել հավատքի, աղոթքի ու նվիրական գործերի շնորհիվ: Սրբազան հայրը վերջում տոնի առիթով շնորհավորեց հավատացյալ հայորդիներին եւ մաղթեց սուրբծննդյան լուսավոր օրհնությունն ամենքին:

Սուրբ Պատարագի ավարտին՝ նախատոնակի արարողության ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ սուրբ խորան եւ վառեց կենսատու մոմը, որից Հիսուս Քրիստոսին խորհրդանշող լույսը բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, որտեղ, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց տարվա առաջին տնօրհնեքը:

# Ռուսաստանի Դաշնության Պատվո շքանշան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին

**Հունվարի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեց Ռուսաստանի Դաշնության Պատվո շքանշանը: Վեհափառ Հայրապետը պետական պարգեւին արժանացել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրով՝ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ մշակութային-հումանիտար կապերի զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար:**

**Արարողությանը ներկա էին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, հայաստանյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ եւ տարբեր կառույցների ղեկավարներ:**

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արարողակարգային եւ արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի ողջույնի խոսքից հետո Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինն ընթերցեց ՌԴ նախագահի հրամանագիրը, ապա Նորին Սրբությանը հանձնեց ՌԴ Պատվո շքանշանը:**

**Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու պատգամը փոխանցեց ներկաներին:**

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ՌԴ Պատվո շքանշանի հանձնման արարողությանը

*Ռուսաստանի Դաշնության մեծարգո դեսպան,*

*Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիվ հայրեր,*

*Գերագույն հոգեւոր խորհրդի պատվարժան անդամներ եւ սիրելի ներկաներ,*

*Ողջունում ենք ամենքիդ ներկայությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ բերում Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները Ամանորի եւ մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության հոգեւորոգ տոների առիթով:*

*Շնորհակալությամբ ստացանք Ռուսաստանի Դաշնության մեծահարգ նախագահ տիար Վլադիմիր Պուտինի կողմից Մեզ շնորհված Ռուսաստանի Դաշնության Պատվո շքանշանը՝ մեծարգո դեսպան տիար Սերգեյ Կոպիրկինի ձեռամբ: Հայրապետական Մեր մաղթանքներն ու օրհնությունն ենք բերում ի դեմս Ձեզ, պարո՛ն դեսպան, Ռուսաստանի Դաշնության նախագահին՝ ազնիվ ուշադրության եւ գնահատանքի համար:*

*Մեր ժողովուրդներն ունեն դարավոր բարեկամության հարուստ պատմություն, որը կոփվել ու թրծվել է համատեղ կրած նեղություններով ու դժվարություններով եւ բազում հաղթանակներով: Մեր ժողովուրդների եղբայրությունը ամրորեն հաստատված է քրիստոնեական մեր հավատքի ու դավանած ընդհանուր արժեքների վրա: Հայ-ռուսական փոխհարաբերությունների պատմության ընթացքում, այնուամենայնիվ, անկախության հռչակումից ի վեր մեր ժողովուրդը զգացել է բարեկամ Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը եւ զորակցությունը: Այսօրինակ բարեկամության ցայտուն վկայության ականատեսը եղանք, երբ Ռուսաստանի Դաշնության եւ անձամբ նախագահ Վլադիմիր Պուտինի անմիջական ջանքերով դադարեցվեց 2020 թվականի արցախյան արյունալի պատերազմը, նաեւ շարունակվում է կարեւոր աջակցությունը պատերազմի աղետալի հետեւանքների հաղթահարման, Արցախի մեր ժողովրդի անվտանգության ապահովման, Դաղիվանքի եւ հայոց հնամենի սրբավայրերի պահպանության գործում: Ամենքիս հոգին այս օրերին անհանգիստ է Լաչինի միջանցքի արգելափակման պատճառով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամով: Աղոթում ենք, որ արդյունավորվեն ռուս խաղաղապահների ջանքերը՝ ուղղված Լաչինի միջանցքի արգելափակման վերացմանը եւ Արցախում տիրող աղետալի վիճակի հաղթահարմանը: Թող Ամենակալի օգնականությամբ մեր տարածաշրջանը վերագտնի իր խաղաղությունը, վերականգնվի Հայաստանի տարածքային ամբողջականությունը, եւ միջազգային հանրության կողմից ճանաչվի Արցախի մեր ժողովրդի՝ հայրենի հողում ապահով, ազատ ու անկախ ապրելու իրավունքը:*

*Սիրելինե՛ր, Ռուսաստանի Դաշնության այս բարձր պարգեւի շնորհումը դիտարկում ենք հայ-ռուսական բարեկամության, Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ հոգեւոր-մշակութային կապերի զորացման գործում Հայոց Եկեղեցու պատմական դերակատարության արժեւորման համատեքստում, նաեւ որպես գնահատանք Ռուսաստանի կյանքում հայ համայնքի կարեւոր ավանդի: Մեր ժողովուրդների բարեկամության ակունքներում Հայ եւ Ռուս Եկեղեցիների եղբայրությունն է: Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի՝ ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբոր հետ սերտ գործակցության մեջ ամենայն ջանք ի գործ ենք դնելու հանուն մեր ժողովուրդների դարավոր բարեկամության առավել ամրապնդման եւ հարատեւության:*

*Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ այսօրվա փոթորկոտ եւ տագնապներով լի աշխարհում ամենողորմ Տերը խաղաղության իր շնորհները հեղի համայն մարդկության կյանքին եւ ապահովության ու բարօրության մեջ պահի մեր եղբայր ժողովուրդներին՝ պարգեւելով արդյունաշատ գործակցություն եւ մշտանորոգ ձեռքբերումներ մեր բարեկամ երկրներին: Այս առիթով, հարգարժա՛ն պարոն դեսպան, հաճեցեք Ռուսաստանի Դաշնության նախագահ մեծարգո տիար Վլադիմիր Պուտինին Քրիստոսի Սուրբ Ծննդյան կենարար ավետիսի հետ մեկտեղ փոխանցել Մեր երախտագիտությունը եւ կենաց արեւշատության, հաջողության եւ Ռուսաստանի առջեւ ծառացած մարտահրավերների ու փորձությունների շուտափույթ հաղթահարման բարեմաղթանքները:*

*Թող Աստված օրհնի եւ անսասան պահի բարեկամությունը մեր եղբայր ժողովուրդների:*

# Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը մարտական դիրքեր

Դեկտեմբերի 31-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանի, Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Պարթեւ վրդ. Բարսեղյանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանագծի մարտական դիրքեր: Նորին Սրբությանը դիմավորեց ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր Առաքել Մարտիկյանը:

Հայոց Հայրապետը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով հայրենյաց պաշտպաններին, մեծապես արժեւորեց հայ զինվորների եւ հրամանատարների նվիրյալ ու անձնազոհ ծառայությունը հայրենիքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անփորձանք եւ ապահով ծառայություն մաղթեց ամենքին՝ նշելով, որ մեր զինվորականները մշտապես հիշվում են Հայոց Հայրապետի եւ հայ եկեղեցականների աղոթքներում:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը «Եռաբլուր» զինվորական դանթեոն

Յունվարի 1-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եպիսկոպոսաց դասի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայրենիքի անկախության ու պաշտպանության համար իրենց կյանքն ընծայաբերած հայորդիների հիշատակին:

Վեհափառ Հայրապետը եւ հոգեւորականաց դասն աղոթք բարձրացրին առ Աստված՝ նահատակ քաջորդիների հոգիների խաղաղության համար: Նորին Սրբությունն ու եկեղեցականներն առանձնաբար այցելեցին նաեւ ազգի հերոս զավակների շիրիմներին՝ բերելով իրենց խոնարհումն ու աղոթքը:

**Լրատվական նյութերը՝**
**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի**
**տեղեկատվական համակարգի**

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԱՎԵՏԻՍԸ

Սուրբ Ծնունդ.... Պատկերացնո՞ւմ եք, թե այս տոնը որքա՜ն խորախորհուրդ եւ մեծիմաստ է: Սուրբ Ծնունդ. իրար միահյուսված այս բառերն արդեն պատմում են մի սքանչելի իրողության, այնպիսի հրաշքի մասին, որն իր աներեւույթ թեւերով պարուրում է համայն մարդկությանն ու իր միածին մանկան նման գուրգուրում: Ո՞վ է, ուրեմն, այդ հրաշքը Հորինողը, որքա՜ն սքանչելի եւ կարեւոր է այն մարդկության, մարդկային հոգու համար: «Սրբություն»-ը, որ բնութագրում է ամենակարող Աստծուն, եւ «ծնունդ»-ը, որը մարդկային էակին հատուկ իրողություն է, իրենց աներեւակայելի միությամբ պատկերում են միակ Սուրբ եւ ամենագութ Աստծու խոնարհումը մինչեւ մարդու, մարդկայինի ամենախոնարհ աստիճանը: Մարդկային բոլոր ծնունդներից ամենահրաշալին էր հենց այս Ծնունդը, քանի որ ծնվում, մարմին էր առնում Ինքը՝ Անծինն ու Անմարմինը, Նա՛, Ում ամենաբովանդակ էությունը չի պարփակվում անգամ երկնքի անհուն տարածության մեջ, Նա՛, Ով վեր է տարածությունից ու ժամանակից: Եվ ահա Նա՝ Անժամանակը, հավիտենական ու անսահման Աստված, հանձն է առնում սահմանավորվել եւ ժամանակի նեղ ու անձուկ խորխորատը թափանցել՝ այնտեղից դեպի անժամանակյա անհունը բարձրացնելու ամենախոնարհին, ամենաթույլ, ամենամեղավոր ու ամենասահմանավոր էակին՝ մարդուն:

Սուրբ Ծնունդ. ահա թե որ բառերով է բնութագրվում այն իրողությունը, երբ Սրբությունը հաղորդակից է դառնում անսուրբին, մեղավորին ու անկարողին, եւ դա անում է ո՛չ թե, քա՛վ լիցի, միայն մարդկային հոգի՛ն առնելով, այլ համակ մարդուն՝ հոգի եւ մարմին ունեցող այդ էակին հավասարվելով Իր ամենասուրբ ծննդյամբ: Եվ եթե այլ խոսքով նկարագրենք այս հրաշքը, պետք է վկայենք, որ աշխարհացունց այս օրը տեղի ունեցած եւ ունեցող սքանչելիքը Սրբության ծնունդն է... Սրբություն, որ մարմին է առնում հանուն այն մի բուռ երազանքի եւ այն չնչին հույսի, որը ճառագում էր լույս աշխարհ եկած Մանկան վճիտ աչքերում: Նայե՛ք Նրան՝ այդ Մանկանը, որ Իր ամենասրբուհի Մայր Աստվածածնի գրկում է: Նայե՛ք մանուկ Հիսուսի լուսալիր աչքերին, որոնք ասես խոսում ու սեր են քարոզում, սեր՝ որպես մխիթարություն՝ ընդդեմ ամեն չարիքի:

Հիրավի, Սուրբ Ծնունդը ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ սիրո անլուռ քարոզչությունը: Եթե Քրիստոս՝ Աստծու Միածին Որդին, ծնվելուց զատ, այլ հրաշք այլեւս չգործեր, միայն Նրա ծնունդը բավ էր մարդկությանը սիրո հաղթանակի մասին պատմելու եւ այդ սերը, որպես ժառանգություն, մարդկության բոլոր սերունդներին ավանդելու համար: Մեզ ավետարանված այդ սիրո զորությունը փոքր-ինչ պատկերացնելու համար պետք է խոկանք այն խոնարհության շուրջ, որը բնորոշ էր Փրկչի ծնունդին: Մանուկ Հիսուս ծնվեց մթին ու մռայլ քարայրում (Սուրբ Աստվածածինը խանձարուրով փաթաթեց Նրան եւ դրեց մսուրի մեջ. հմմտ. Ղուկ. Ա 3–7) ՝ զուրկ ամեն տեսակի ճոխությունից, որ վայել պետք է լիներ երկնքի գահավորակին բազմած Աստվածորդուն: Աստված մարդկային մարմին առավ, որպեսզի երկնքի գահավորակին բազմեցնի մարդկային ծնունդ եղող ամեն էակի՝ ծնված ամենախոնարհ մսուրում կամ թե ամենաշքեղ, արքայական պալատում:

Մանկանը երկրպագելու եկած հովիվներին ավետվել էր, որ Նա աշխարհի ճշմարիտ Փրկիչն է, Որի կարիքը իրենք այդքա՜ն զգում են:

Աստվածորդին ծնվեց հանուն ամենքի. Նա լույս աշխարհ եկավ հանուն Լույսի հաղթանակի եւ Իր անմար լույսով ողողեց համայն տիեզերքը: Սուրբծննդյան ավետիսն առաջինն ստացան հովիվները, ապա տարիներ, տասնամյակներ ու դարեր շարունակ այդ Ծնունդը անընդհատաբար լուսավորեց եւ այժմ էլ լույսով է զարդարում բոլոր նրա՛նց հոգիները, ովքեր չեն զլանում իրենց հայացքը դարձնել դեպի Փրկիչ-Մանուկը, Որը հույսով լեցուն հայացքով մշտապես նայում է մեզ՝ լինենք հասարակ հովիվ թե հզոր թագավոր:

Քրիստոսի ծնունդն ամենքիս ծնունդն է, մարդկային հոգու վերածնունդն է Սուրբ Ծնունդը: Երբ երկրային կյանքի փոթորիկները, փորձությունները, տառապանքն ու ցավը խավարում, մթագնում են մեր ուղին, Սուրբ Ծնունդի ամենամյա տոնը մեզ համար լույսի շող է դառնում՝ հիշեցնելով ամենակարող Աստծու սքանչելի փրկագործությունը՝ մեզանից յուրաքանչյուրին դեպի երկինք բարձրացնելու եւ ո՛չ թե մսուրում, այլ երկնային լուսազարդ օթեւաններում խանձարուրելու, Իր իսկ աստվածային գրկո՛ւմ մեր մանկացած հոգիները բարուրելու:

Աստվածորդու անճառելի փրկագործությունը սիրո աննահանջ ձեռքմեկնումն է՝ ուղղված յուրաքանչյուրիս: Սուրբ Ծնունդը, ահավասիկ, դարձյալ մեկ հնարավորություն է՝ ապացուցելու, որ մարդկության փրկության հույսը ո՛չ թե սին պատրանք, այլ բերկրալի ուրախություն է, եւ Միածնի ծնունդն իրապես հաճություն է մեզ՝ մարդ արարածներիս համար, երկրի վրա՝ խաղաղություն, իսկ բարձունքներում՝ փառք ամենակարող Աստծուն:

Սուրբ եկեղեցու խորանն ասես վերածվել է բեթղեհեմյան քարայրի, ուստի եկե՛ք ամենքս մոտենանք ու ծնրադիր մեր գիրկն առնենք խանձարուրի մեջ բարուրված այն աղքատ ու փոքրիկ Մանկանը, Որն իրականում աշխարհի Տերն ու Փրկիչն է, եւ հայցե՛նք Նրանից, որ մեզ վերածնի որպես մանուկների՝ սո՛ւրբ, մաքուր եւ անապական:

Աղերսե՛նք այդ Մանկանը, որ Իր սրտի այն մի բուռ լույսը՝ սփռված համայն տիեզերքով մեկ, մեզ եւս լուսավորի ու առաջնորդի դեպի փրկության ճանապարհը, դեպի կյանքն ու հավիտենականությունը. ամեն:

**ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

## Ծննդյան գիշեր

Մի մո՛ւթ գիշեր, աղոտ մի լույս,
Ու մի Մանուկ՝ եկած աշխարհ,
Սրտում՝ թախիծ, աչքերում՝ հույսն
Արարչության անապաշխար...

Մսուրի մեջ խանձարուրված՝
Մի բուռ դարձավ Աստված համայն,
Աստղ ու երկինք՝ իրար անցած,
Փառքն էին երգում Փրկիչ-Մանկան:

Մութ խավարում գիշերային
Հովիվ ու մոգ դարձան վկան
Ու մարգարեն աստվածային
Սուրբ Ծննդյան քրիստոսական...

Լուռ բարուրվեց Աստված անբավ
Իր արարած ձեռքերի մեջ,
Լույսն անստվեր Ճրագ դարձավ,
Որ աշխարհը մնա անշեջ:

Մութ խավարում աղո՛տ
Մի լույս՝ մի բուռ Աստվա՛ծ
բյո՛ւր-բյուրացավ՝
Սրտում՝ թախիծ, աչքերում՝ հույս,
Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ...

**Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

# Սրբալույս մյուռոն

Մյուռոնը Հայոց Եկեղեցու ծիսապաշտամունքային համակարգում գործածվող (թերեւս ամենաշատը) նյութերից է: Այս սրբազան յուղով են օծում ծիսական արարողությունների ժամանակ օգտագործվող առարկաները, ինչպես նաեւ եկեղեցիները, խաչերը, պատկերները եւ այլն: Ձեռնադրությամբ եւ սրբալույս մյուռոնով օծմամբ են քահանաները հոգեւոր իշխանություն եւ սպասավորության իրավունք ստանում: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ «մյուռոն»-ը հունարեն բառ է (μύρον) եւ թարգմանաբար նշանակում է «յեղուկ անուշահոտութիւն, հոտաւէտ իւղ» (*Հր. Աճառյան,* Հայերեն արմատական բառարան, հտ. Գ, Երեւան, 1977, էջ 326): Պետրոս վրդ. Ճիզմեճյանն իր կազմած բառարանում «մյուռոն» բառը բացատրում է իբրեւ «օծման անուշահոտ սուրբ իւղ» (*Պետրոս վրդ. Ճիզմէճեան,* Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, 1957, էջ 1008), իսկ Ստեփան Մալխասյանցը՝ «....ձիթապտղի մաքուր իւղ, հետը խառնած զանազան անուշահոտ հիւթեր, որ հանդէսով օրհնում են եկեղեցում» (*Ստ. Մալխասեանց,* Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944, էջ 307): «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում նշվում է, որ «մյուռոն» բառը ծագում է հունարենից եւ թարգմանվում է «իւղ անոյշ.... ի դրոշմել զմկրտեալս, յօծանել զքահանայս եւ զսուրբ սեղանն եւ զսուրբ սպասս» (անդ, հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 252): Այս բոլոր բացատրություններում ընդգծվում են մյուռոնի անուշահոտությունն ու ծիսական կիրառությունը:

Մյուռոնն առաջին անգամ հիշատակվում է Հին Կտակարանում՝ մասնավորապես Ելից գրքում, սակայն «օծության յուղ» անվամբ: Համաձայն այս վկայության՝ Աստված Մովսեսին պատվիրում է. «Եւ դու առ քեզ խունկս անուշունս, ծաղիկ ընտիր զմընռնենեաց հինգ հարիւր սիկղ, եւ կինամոմոն զանոյշ զկէս այնորիկ՝ երկերիւր եւ յիսուն, եւ զխունկնեղէգն զանոյշ երկերիւր եւ յիսուն, եւ հիրիկ հինգ հարիւր սիկղ ըստ սրբութեանն, եւ իւղ ի ձիթենեաց հիմենաւ միով: Եւ արասցես զայն իւղ յօծումն սրբութեան, իւղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց, իւղ յօծումն սրբութեան լինիցի» (Ելք Լ 22–25): Այնուհետեւ Աստված պատվիրում է յուղով օծել վկայության խորանը, զոհասեղանն ու ամբողջ սպասքը, ինչպես նաեւ քահանաներին (հմմտ. Ելք Լ 26–31): Ըստ հինկտակարանյան վկայությունների՝ օծմամբ էին իշխանություն ստանում թագավորները, մարգարեները, քահանաները, որոնք, Աստծու Հոգով լցված, պետք է առաջնորդեին ժողովրդին: Քահանաների օծմանն է վերաբերում Ելք գրքի ԻԸ 41-ը. Աստված պատվիրում է Մովսեսին. «Եւ օծցես զնոսա, եւ լցցես զձեռս նոցա, եւ սրբեսցես զնոսա՝ զի քահանայասցին ինձ» (ԻԸ 41): Հին Ուխտում նկարագրվում է, թե ինչպես է Սամվել մարգարեն վերցնում յուղով լի սրվակն ու հեղում Սավուղի գլխին՝ նրան օծելով թագավոր (Ա Թագ. Ժ 1): Աստվածաշնչում բազմաթիվ վկայություններ են առկա նաեւ մարգարեների օծման վերաբերյալ: Օրինակ՝ Աստծու պատվերով Եղիան մարգարե է օծում Եղիսեին (Գ Թագ. ԺԹ 16): Սուրբգրային վկայությունների հիմամբ կարող ենք եզրակացնել, որ Հին Ուխտում օծության յուղը համարվում էր նյութեղեն ու տեսանելի այն միջոցը, որով մաքրագործվում, սրբագործվում էին թե՛ մարդիկ, թե՛ առարկաները:



Նոր Կտակարանում եւս հիշատակություններ կան օծության յուղի վերաբերյալ: Հակոբոս առաքյալն իր Ընդհանրական թղթում գրում է. «Վշտանայցէ՞ ոք ի ձէնջ, յաղօթս կայցէ. բերկրիցի՞ ոք, սաղմոս ասասցէ. հիւանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն» (Հակ. Ե 14): Նորկտակարանյան այս հատվածը հստակ վկայում է, որ հիվանդներին օծելու ավանդույթն առաքելահաստատ է եւ սկզբնավորվել է եկեղեցու վաղ շրջանում:

Նոր Կտակարանում յուղով օծումը նաեւ հարգանքի, մեծարանքի նշան էր: Մարկոսի Ավետարանում նկարագրվում է, որ Բեթանիայում՝ բորոտ Սիմոնի տանը, Հիսուսին մոտենում է մի կին եւ յուղի շիշը կոտրելով՝ անուշաբույր նյութը հեղում է Նրա գլխին (հմմտ. Մարկ. ԺԴ 3): Այս դեպքը հիշատակում է նաեւ Հովհաննես ավետարանիչը. «Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն Յիսուսի, եւ հերով իւրով մաքրէր զոտս նորա. եւ տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն» (Հովհ. ԺԲ 3):

Քրիստոս նշանակում է Օծյալ (այս մասին առավել մանրամասն տե՛ս *Henry George Liddell, Robert Scott,* Greek-English Lexicon, Oxford, 1968, էջ 2007). համաձայն Ղուկասի Ավետարանի՝ Աստծու Որդին Իր մասին հայտնելիս շեշտում է, որ Իր միջոցով իրականացավ Եսայիի մարգարեությունը. «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ....» (Ղուկ. Դ 18): Եթե Փրկչի ծնունդից առաջ օծվում էին Աստծու ընտրյալ մահկանացուները միայն, ապա Քրիստոս Իր էությամբ եւ վերին կանխասահմանումով ըստ ինքյան բացարձակ օծումն էր ներկայացնում (*Հ. Քյոսեյան,* Սրբալույս մյուռոն, «Էջմիածին», 1992, Զ–Է, էջ 43): Դ դարի Եկեղեցու նշանավոր հայր Կյուրեղ Երուսաղեմացին այս առնչությամբ գրում է. «Քրիստոս մարմնով՝ մարդու կողմից չօծվեց յուղով կամ մյուռոնով, այլ Հայրը Նրան, համայն աշխարհի համար Փրկիչ նախասահմանած լինելով, օծեց Սուրբ Հոգով» (*Ս. Կյուրեղ Երուսաղեմացի*, Կոչումն ընծայության, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 372):

«Գործք առաքելոց»-ը վկայում է ջրով մկրտության մասին. առաքյալն իր ձեռքը դնում էր ջրով մկրտվածի գլխին, որ վերջինս Սուրբ Հոգի ստանա. «Յայնժամ եդին զձեռս ի վերայ նոցա, եւ առնուին Հոգի Սուրբ» (Գործք Ը 17): Հետագայում, ինչպես իրավամբ նշում է Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, «....հաւատացեալների համայնքի մէջ սովորութիւն մտաւ մկրտեալներին իւղով օծել կամ դրոշմել՝ իբրեւ Ս. Հոգին ընդունելու եւ նոր մարդ լինելու նշան» (*Կարապետ եպս. Տէր-Մկրտչեան,* Սուրբ միւռոնի օրհնութիւնը, Ս. Էջմիածին, 2008, էջ 10–11): Այսօր եւս Եկեղեցին շարունակում է օգտագործել օծության յուղը՝ իբրեւ Սուրբ Հոգու խորհրդանիշ:

Հայոց Եկեղեցում մյուռոնի գործածությունն սկսվում է Դ դարից. այս մասին վկայում է Ագաթանգեղոսը. «Եւ իբրեւ իջանէին մարդիկն ամենայն եւ թագաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն եփրատ գետոյն՝ նշան սքանչելի երեւեալ յԱստուծոյ. զի զետեղ առեալ ջուրք գետոյն՝ անդրէն դարձան ընդ կրուկն: Եւ լոյս սաստիկ երեւեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ եւ եկաց ի վերայ ջուրց գետոյն եւ ի վերայ նորա նմանութիւն տէրունական խաչին եւ այնչափ ծագեաց լոյսն, մինչեւ արգելոյր զճառագայթս արեգականն եւ նուաղեցուցանէր: Եւ իւղն օծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն՝ շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկաւն խաղայր» (*Ագաթանգեղոս,* Հայոց պատմութիւն, աշխ.՝ Ա. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983, էջ 464): Այստեղ պատմիչը ներկայացնում է մյուռոնի առաջին կիրառությունը Հայոց հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի (302–325 թթ.) ձեռամբ: Սրբալույս մյուռոնը Ս. Գրիգոր Լուսավորչից սերնդեսերունդ եկել ու հասել է մեզ: Երբ ամեն անգամ նոր մյուռոն է օրհնվում, հին մյուռոնը խառնվում է նորին, եւ այսպես շարունակաբար փոխանցվում է Ս. Գրիգոր Լուսավորչի օրհնած մյուռոնից: Անանիա Սանահնեցին իր երկում այս մասին գրում է. «....յորժամ աւրհնեմք զմիւռոնն, զհին մեռոնն ի նորն խառնեմք եւ այնպէս աւրհնեմք, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ եւ ի սրբոյն Սահակայ մինչեւ ցայսաւր նոյն միւռոնն կատարի եւ գայ մինչեւ ցայժմ, ընդունելով միշտ զշնորհս Հոգւոյն Սրբոյ....» (*Անանիա Սանահնեցի,* Աստվածաբանական երկեր, աշխ.՝ Հակոբ Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2000, էջ 302): Իսկ Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է, որ մյուռոնօրհնության ժամանակ «սովորութիւն է նաեւ մէկ երկու լիտր հին միւռոն խառնել նոր պատրաստուած միւռոնին, որպէսզի սոյն կերպով միշտ հինը նորին կապուած մնայ: Ժողովրդական աւանդութիւն է, թէ այս խառնուրդի շարունակութեամբ այժմեան միւռոնը կը կցուի Յիսուսէ օրհնուած ձէթին հետ, զոր առաքեալներ Հայաստան բերին իրենց հետ....» (*Մաղաքիա արք. Օրմանեան,* Հայոց Եկեղեցին, Երեւան, 1993, էջ 168):

Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակներից մինչեւ այսօր մեր ժողովուրդը մեծագույն հավատով ու երկյուղածությամբ է ներկա գտնվել սրբալույս մյուռոնի օրհնությանը եւ մյուռոնի կաթսայի առջեւ ծնրադիր՝ հաղորդակցվել է իր սրբազան նախնիների հավատքին: Այս առումով դիպուկ է Սահակ եպս. Տեր-Հովհաննիսյանի բնորոշումը. «Սրբալույս մեռոնի կաթսան հայ հավատացյալ եւ հայրենասեր ժողովրդի մեռոնաբույր սիրտն է, ուր հայ հավատքն ու հոգին, հայ կյանքն ընդհանրապես օրհնվում, շատանում եւ իբր մասունք բաշխվում է բոլոր ժամանակների հայությանը» (*Սահակ եպս. Տեր-Հովհաննիսյան,* Սրբալույս մյուռոնի օրհնությունը, «Էջմիածին» 1955, Ը, էջ 20):

Մյուռոնօրհնության ժամանակ տասնյակ հազարավոր ուխտավոր աշխարհի տարբեր վայրերից եկել հասել է Սուրբ Աթոռ՝ մասնակից դառնալու Հայոց Եկեղեցու սրտագրավ եւ մեծաշուք արարողությանը: 1886 թվականին Մակար Ա Թեղուտցի հայրապետը (1885–1891 թթ.) կատարում է իր անդրանիկ մյուռոնօրհնությունը: Արարողությանը մասնակցում է նաեւ բժիշկ Միսակ Արամյանը, որն իր ապրումները, հուշերն արտացոլում է «Ճանապարհորդութիւն Սալիանից դէպի Էջմիածին» ուղեգրության մեջ. «Չկար երկրագնդիս երեսին մի կէտ, մի վայր, որտեղ տարագիր ու նժդեհ հայը բնակութիւն է հաստատել, որ իւր ներկայացուցիչը չունենար այս աշխարհախումբ ամբոխի մէջ: Բոլոր Վաղարշապատը՝ իւր ընդարձակ տարածութեամբ, թւում էր, թէ համաստիւռ հայութեան աշխարհահանդէս էր: Քանի տարազ տիպարների, զգեստների, սովորութիւնների եւ բաւորութիւնների: Ով կամենում է ուսումնասիրել եւ ճանաչել հայութեանը, նա անպատճառ պարտաւոր է Ս. Միւռոնի օրհնութեան՝ Էջմիածին գնալ: Դուք այստեղ կիմանաք, թէ ինչ մեծ զօրութիւն կայ ուխտագնացական սովորութեան մէջ» (*Մ. Արամեան,* Ճանապարհորդութիւն Սալիանից դէպի Էջմիածին, Տփղիս, 1887, էջ 151): Այնուհետեւ նկարագրելով օրհնության արարողությունը՝ հեղինակը գրում է. «....ամբոխը կորցրած է ինքնազսպութեան զօրութիւնը. նա անպայման ենթարկուած է նոյն րոպէին նրա ամբողջ գոյութիւնը համակած անզուսպ ցանկութեան.... որի սիրտն է գնում, որը նուազում է, որը թուլանում է: Բայց ով կարող է դրանց դուրս բերելով ազատել. անցք, ճանապարհ ամենեւին չկայ. շարժուել՝ նշանակում է առաւել ճնշուել քրտինքը քամող ջխտիչի տակ: Արարողութիւններին եւ ընթերցուածներին ունկնդիր լինելու մասին մտածել անգամ կարելի չէ.... Ես զգում եմ, որ նուաղում եմ. մատս սաստկութեամբ կրծում եմ, որ զգայութիւնս արթուն մնայ: Հազար վերստ կտրել, ինչ է՝ միւռոնի օրհնութիւնը տեսնիլ եւ նուաղիլ: Չէ՛, լաւ է մեռնել, բայց գոնէ բաց աչքով տեսնել.... Ամենեւին չեմ կարող մեղադրել նրան, որ պատրաստ է ամեն բան ոտնահարել, միայն թէ տեսնի միւռոնի եփ գալը....» (*Մ. Արամեան,* նշվ. աշխ., էջ 160–161):

**Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Ուշագրավ դրվագներ ջրօրհնեքի պատմությունից

Վաղնջական ժամանակներից ի վեր Հայ Եկեղեցում Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի անքակտելի մասն է կազմում ջրօրհնեքը՝ իբրեւ Հորդանան գետում Հիսուսի մկրտության խորհրդանիշ:

Ս. Գրիգոր Տաթեւացու վկայությամբ՝ Բարսեղ Կեսարացին է սահմանել ջրօրհնեքի կարգը, որը Սահակ Ա Պարթեւ կաթողիկոսի (387–439 թթ.) կարգադրությամբ ներմուծվել է Հայ Եկեղեցու ծիսապաշտամունքային համակարգ:

Մեր օրերում շատերս ենք Սուրբ Ծննդյան պատարագից հետո եկեղեցիներում ներկա լինում ջրօրհնեքին: Միջդեռ վաղ շրջանում եկեղեցական այս կարգը կատարվել է եկեղեցիներից դուրս՝ մերձակա գետերի ջրերում: Հովհաննես Օձնեցու (717–728 թթ.) կանոնը պատվիրում է. «Պարտ եւ արժան է Յայտնութեանն աւուր կատարել զջրոյն աւրհնութիւն ի վերայ ջուրն ըստ պատշաճի ի տեղիսն հանդիպեալ, ձէթ արկանելով ի նա եւ աղաւթս մատուցանելով. ի ձեռն այնորիկ յիշատակել զառ ի Փրկչէն վասն մեր ի Յորդանան զմկրտութիւնն»: Գետերում կատարված ջրօրհնեքի բազմաթիվ դրվագներ են հանդիպում Հայ Եկեղեցու պատմության էջերում: Դրանցից առավել հայտնին Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսի (1019–1058 թթ.) կատարած ջրօրհնեքի պատմությունն է:

Մեր պատմիչների վկայությունների համաձայն՝ սույն ջրօրհնեքը կատարվել է Տրապիզոնում՝ Մաչկա գետակի վրա, 1023 թվականի հունվարի 6-ին, Բյուզանդիայի Վասիլ Բ կայսեր ներկայությամբ՝ ապացուցելով հայոց հավատքի ուղղափառությունը: Կիրակոս Գանձակեցին այս մասին գրում է. «....զամօթի հարան յոյնքն ամենայն, եւ ակամայ գովէին զհաւատս Հայոց....»: Ըստ պատմագիրների հաղորդած տեղեկությունների՝ երբ կաթողիկոսը մյուռոնը կաթեցնում է գետի մեջ, ջուրը լույս է ճառագում, եւ գետի ջրերը հայրապետի աղոթքով հետ են հոսում:

ԺԷ դարի պատմիչները պարսկական տիրապետության շրջանից ուշագրավ դրվագներ են փոխանցում Երեւանի Հրազդանի ձորում կատարված ջրօրհնեքի արարողություններից:

Պարսից Շահ Աբասին, թերեւս, ակնահաճո է եղել հայկական ջրօրհնեքի հանդեսը, եւ հավանաբար այս պատճառով է, ինչպես վկայում է Զաքարիա Սարկավագը, որ շահը կարգադրել է ամեն տարի իր ներկայությամբ ջրօրհնեք անել: Նրա օրինակով Երեւանի պարսից բոլոր խաները եւս հետագայում ներկա են եղել Հայ Եկեղեցու ջրօրհնեքին:

Այսպես՝ Զաքարիա Սարկավագը հայտնում է, որ Քոթուկ խանը պատվիրում է Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսին (1632–1655 թթ.) իր ներկայությամբ կատարել ջրօրհնեքը: Պատմիչի վկայության համաձայն՝ պարսից խանն իր վրանը խփում է Հրազդան գետի ձախ ափին՝ Խնկելաձորում, որն այժմ կոչվում է Զորագյուղ: Այստեղ եւ կատարվում է ջրի օրհնությունը:

Զաքարիա Ագուլեցին հիշատակում է 1676 թվականի ջրօրհնեքը, երբ Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսը (1655–1680 թթ.), գալով Երեւան, «հրաշալի ջրաւրհնէք արաւ»:

Ջրօրհնեքի մեկ այլ ուշագրավ դրվագ է Երասխի ջրերում Ամենայն Հայոց Կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացու (1734–1737 թթ.) կատարած արարողությունը: Մուղանի դաշտում Նադիր շահի թագադրությանը հրավիրված կաթողիկոսը 1736 թվականի հունվարի 6-ին՝ Սուրբ Ծննդյան տոնին, իր մոտ է կանչում հայերին եւ Երասխի ափին տեղակայված կաթողիկոսական վրանում նշում տերունական տոնը: Ապա, ինչպես իր «Պատմության» մեջ վկայում է ինքը՝ Աբրահամ Գ Կրետացին, ուղղվելով դեպի գետեզր, կատարում է ջրօրհնյաց կարգը, որին մասնակցում են ոչ միայն հայեր: Մեծ է լինում կաթողիկոսի զարմանքը, երբ տեսնում է, թե ինչպես են արարողությանը ներկա պարսիկները Երասխի մյուռոնախառն ջրով օծում իրենց երեսները:

Գետի ջրերում ջրօրհնեք կատարելու ավանդույթը երկար տարիներ պահպանվել է նաեւ Վրաստանի եւ Իմերեթի հայոց թեմում: Այսպիսի ջրօրհնեք կատարվել է Թիֆլիսի Քուռ գետում:

Գեղանկարիչ Հմայակ Հակոբյանի «Հին Թիֆլիս» ալբոմում տեղ է գտել երկու մատիտանկար, ուր պատկերված է 1885 թվականի ջրօրհնեքը: Դրանցից մեկում եկեղեցականների եւ հավատացյալների բազմամարդ հանդիսավոր թափորն է, որ այսօր արդեն ավերված Վանքի մայր տաճարից շարժվում է դեպի Քուռ գետը, մյուսում պատկերված է Քռի վրա հատուկ այդ արարողության համար կառուցված կամուրջը:

*«Ջրօրհնեք կամ հայկական Հորդանան»*

*«Հորդանան Քուռ գետի վրա». լուսանկարները՝ Լ. Չիդիլյանի հավաքածուից*

Հին Թիֆլիսում մեծ ժողովրդականություն վայելած այս արարողության մասին հետաքրքիր մանրամասներ է հաղորդում նաեւ Լեւոն Չիդիլյանն իր «Ջրօրհնեք կամ հայկական Հորդանան» հոդվածում՝ այն ամբողջացնելով արարողությունը պատկերող ԺԹ դարի արխիվային մի քանի լուսանկարներով:

Ըստ Լ. Չիդիլյանի՝ Վանքի առաջնորդանիստ եկեղեցում հունվարի 6-ին մատուցված Սուրբ Ծննդյան պատարագից հետո հոգեւորականներից ու Թիֆլիսի եւ շրջակա գյուղերից ժամանած հայ հավատացյալներից կազմված մեծահանդես թափորն ուղղվում էր դեպի գետեզր: Ջրօրհնեքը կատարվում էր հատուկ այս արարողության համար կառուցված գմբեթավոր շինությունում՝ թեմական առաջնորդի նախագահությամբ եւ Թիֆլիսի հայկական եկեղեցիների 50-հոգանոց միացյալ երգչախմբի երգեցողությամբ՝ համընդհանուր ցնծություն պարգեւելով ներկաներին:

Հայտնի է նաեւ, որ 1895 եւ 1899 թվականներին, գտնվելով Թիֆլիսում, տոնակատարությանն իր ներկայությամբ մեծ շուք է հաղորդել Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմյան Հայրիկ, 1892–1907 թթ.):

Թիֆլիսում «հայկական Հորդանան» անվանումն ստացած բավականին տպավորիչ ջրօրհնեքի նման արարողությունները դադարել են միայն Ի դարում՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո:

**Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ**

*Հմայակ Հակոբյան. Քռի վրա ջրօրհնեքի համար կառուցված կամուրջը*

*Թափոր՝ Վանքի մայր տաճարից դեպի Քուռ. 1885*

# Սուրբծննդյան որոշ ավանդույթներ հայոց մեջ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծնունդը եւ Աստվածահայտնությունը (մկրտությունը) տոնում է միասին՝ հունվարի 6-ին: Սուրբ Ծնունդը մեզ՝ հայերիս համար ամենասիրելի եւ սպասված տոնն է, որը նշվում է հատուկ կարգով: Հայոց մեջ այս տոնի հետ կապված բազմաթիվ ավանդույթներ են պահպանվել: Բոլոր վայրերում սուրբծննդյան տոնակատարությունն սկսվում է երեկոյան ճրագալույցի արարողությամբ: Մարդիկ իրենց ընտանիքի անդամների հետ մասնակցում են Ճրագալույցի Սուրբ Պատարագին, ապա ստանալով հաղորդություն՝ տոնակատարությունը շարունակում են տանը՝ ավանդական ուտեստներով զարդարված սեղանի շուրջ: Սուրբ Ծնունդի գիշերը հայոց մեջ հայտնի է եղել նաեւ «թաթախման գիշեր» եւ «խթման գիշեր» անվանումներով (տես Հ. *Խառատյան-Առաքելյան,* Հայ ժողովրդական տոները, Երեւան, 2000, էջ 34): Հնում պարտադիր է համարվել եկեղեցուց ընտանիքի անդամների թվով մոմեր բերելը. դրանք վառում էին յուրաքանչյուրի սպասքի մոտ: Մեկշաբաթյա պահեցողությունից հետո սեղանին դրվում էին զանազան կերակուրներ՝ ձկնեղենից պատրաստված ուտեստներ, փլավի տարբեր տեսակներ՝ բրնձով, արիշտայով, խաշիլ, հարիսա, տարբեր անուշեղեններ:

Համշենահայ տանտիրուհիները թխում էին բաղարջ, որի մեջ մետաղադրամ էին դնում: Ճրագալույցին, ըստ ընտանիքի անդամների թվի, այն հավասար կտրում էին: Երբեմն բաժին էր հասնում նաեւ հյուրերին: Ըստ ավանդույթի՝ մետաղադրամն ում բաժին ընկներ, նրան ողջ տարվա ընթացքում հաջողությունն ուղեկից կլիներ: Որոշ վայրերում մետաղադրամի փոխարեն հացի մեջ ուլունք էին դնում:

Մշեցիներն այդ օրը պարտադիր պատրաստել են «Մայրամա ճաշ» կոչվող ապուրը, որի մեջ գցել են սպիտակ բանջար, մայրամա բանջար եւ սիսեռ:

➥ էջ 8

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

# ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ 2022, թիվ 19–24*

## Նամակ քսաներորդ
## ԻՆՉՊԵՍ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՆԱԼ

Հանրային բանավոր ելույթներն այժմ սովորական են դարձել մեր կյանքում: Ամեն ոք պետք է կարողանա ելույթ ունենալ ժողովների ժամանակ, հնարավոր է նաեւ՝ հանդես գալ դասախոսություններով եւ զեկույցներով:

Բոլոր դարերում հազարավոր գրքեր են գրվել ճարտասանների եւ դասախոսների արվեստի մասին: Այստեղ պետք չէ կրկնել այն ամենը, ինչ հայտնի է ճարտասանական արվեստի վերաբերյալ: Միայն մի բան կասեմ՝ ամենապարզը. որպեսզի ելույթն ուշագրավ լինի, հենց խոսողին պետք է հետաքրքիր լինի ելույթ ունենալը: Նրան պետք է հետաքրքիր լինի սեփական տեսակետը ներկայացնելը, դրանում համոզելը, դասախոսության նյութը պետք է հենց նրա համար գրավիչ, ինչ-որ չափով արտասովոր լինի: Խոսողն ինքը պետք է հետաքրքրված լինի իր ելույթի առարկայով եւ կարողանա դա փոխանցել լսողներին՝ նրանց ստիպելով զգալ բանախոսի հետաքրքրվածությունը: Միայն այդ դեպքում հետաքրքիր կլինի նրան լսելը:

Եվ մի բան էլ. ելույթում չպետք է լինեն մի քանի հավասարազոր մտքեր, գաղափարներ: Յուրաքանչյուր ելույթում պետք է լինի մեկ գերիշխող գաղափար, մեկ միտք, որին ենթարկվում են մյուսները: Այդ ժամանակ ելույթը ոչ միայն կհետաքրքրի, այլեւ կհիշվի:

Իսկ ըստ էության՝ մշտապես ելույթ ունեցեք բարի դիրքերից: Անգամ արտահայտվելով ինչ-որ գաղափարի, մտքի դեմ՝ ձգտեք դա կառուցել որպես աջակցություն այն դրականին, որն առկա է ձեզ հետ բանավիճողի առարկություններում: Հանրային ելույթը միշտ պետք է լինի հանրային դիրքերից: Այդժամ այն կարժանանա համակրանքի:

## Նամակ քսանմեկերորդ
## ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ [*Ա մաս*]

Յուրաքանչյուր մարդ պետք է լավ գրի այնպես, ինչպես որ լավ խոսում է: Խոսքը՝ գրավոր կամ բանավոր, առավել է բնութագրում մարդուն, քան նույնիսկ նրա արտաքինը կամ վարվելակերպը: Խոսքում դրսեւորվում են մարդու կիրթ լինելը, ճիշտ եւ ուղիղ մտածելու կարողությունը, մյուսների հանդեպ հարգանքը, «կոկիկությունը»՝ այդ բառի լայն իմաստով:

Այժմ կխոսեմ միայն գրավոր խոսքի վերաբերյալ եւ մեծավ մասամբ գրավոր խոսքի այն տեսակի մասին, որին ես ինքս առավելաբար սովոր եմ, այսինքն՝ գիտական աշխատանքի (հիմնականում գրականագիտական) եւ ընթերցողների լայն շրջանակի համար գրված ամսագրային հոդվածների լեզվի մասին:

Ամենից առաջ մեկ ընդհանուր դիտողություն: Հեծանիվ վարել սովորելու համար անհրաժեշտ է հեծանիվ վարել: Գրել սովորելու համար պետք է գրել: Չեք կարող ձեզ շրջապատել լավ խորհուրդներով, թե ինչպես լավ գրել, եւ անմիջապես սկսեք գրել ճիշտ ու լավ. որեւէ բան չի ստացվի: Ուստի նամակներ գրեք ընկերներին, օրագիր պահեք, հիշողություններ գրեք (դրանք կարելի է եւ անհրաժեշտ է գրել որքան հնարավոր է վաղ՝ վատ չէր լինի նույնիսկ պատանեկան տարիներին. օրինակ՝ ձեր մանկության վերաբերյալ):

Հաճախ խոսում են այն մասին, որ գիտական աշխատություններն ու դասագրքերը գրվում են չոր լեզվով, լի են գրասենյակային դարձվածքներով: Այս առումով հատկապես «բաժին է հասնում» գրականագիտական եւ պատմագիտական աշխատություններին: Եվ մեծավ մասամբ այս մեղադրանքներն արդարացի են: Արդարացի են, սակայն շատ որոշակի չեն: Անհրաժեշտ է գրել լավ, եւ պետք չէ վատ գրել: Դա որեւէ մեկը չի ժխտում, եւ դժվար թե գտնվեն մարդիկ, որոնք հանդես կգան հակառակ տեսակետով: Բայց ահա որն է «լավ լեզուն», եւ ինչպես ձեռք բերել լավ գրելու հմտություններ, այդ մասին հազվադեպ են գրում:

Իրականում «լավ լեզու», որպես այդպիսին, գոյություն չունի: Լավ լեզուն գեղագրությունն չէ, որը ցանկացած առիթով կարելի է կիրառել: Մաթեմատիկական աշխատանքի լավ լեզուն, գրականագիտական հոդվածի լավ լեզուն կամ վիպակի լավ լեզուն տարբեր լավ լեզուներ են:

Հաճախ ասում են. «Նրա հոդվածի լեզուն լավն է, գունեղ է», եւ դպրոցում նույնիսկ դասարանային աշխատանքների համար պահանջում են լեզվի պատկերավորություն: Մինչդեռ լեզվի գունեղությունը միշտ չէ, որ գիտական լեզվի արժանիքն է:

Գեղարվեստական գրականության լեզուն պատկերավոր է, սակայն գիտնականի տեսանկյունից՝ ոչ ճշգրիտ: Գիտությունը պահանջում է միանշանակություն, մինչդեռ գեղարվեստական լեզվում առաջնային նշանակություն ունի հակառակը՝ բազմիմաստությունը: Օրինակ՝ Եսենինի տողերը.

*Տափաստանային վազքում խելահեղ*
*Արտասվելու չափ զանգն է քրքջում:*
(թարգմ.՝ Վ. Դավթյանի)

Մեր առջեւ պատկեր է՝ բովանդակությամբ շատ հարուստ, բայց ոչ միանշանակ:

Ի՞նչ է սա. զանգակի զվարթ ղողմնջ: Իհարկե ոչ միայն դա: Չափազանց կարեւոր է, որ այս տողերում հիշատակվում են նաեւ արցունքները, թեեւ մակերեսային ընթերցման ժամանակ կարելի է եւ դրանց հատուկ նշանակություն չտալ՝ ընդհանուր առմամբ ամբողջ արտահայտությունն ընդունելով որպես սովորական դարձվածք. շատ ուժեղ քրքջալ: Պատկերը հստակեցնում է իր նշանակությունն ընդհանուր բովանդակության շնորհիվ եւ լիովին հասկանալի է դառնում միայն բանաստեղծության վերջում.

*Քանի որ անցյալ իմ կյանքի վրա*
*Արտասվելու չափ զանգն է քրքջում:*

Այստեղ հանդես է գալիս ճակատագրի հեգնանքի թեման՝ ճակատագրի՝ մարդկային կյանքի անցողիկ երեւույթների վրա ծիծաղող:

Ընթերցողն աստիճանաբար ասես թե «կռահում» է գեղարվեստական կերպարը: Գրողն ընթերցողին դարձնում է իր ստեղծագործության մասնակիցը: Գեղարվեստական կերպարի այս աստիճանական ինքնաբացահայտումը եւ ընթերցողի մասնակցությունը ստեղծագործական ընթացքին՝ գեղարվեստական ստեղծագործության շատ էական կողմն են: Դրանից է կախված ոչ միայն այն գեղագիտական հաճույքը, որն ստանում ենք գեղարվեստական ստեղծագործություն ընթերցելիս, այլ նաեւ դրա համոզիչ լինելը: Հեղինակը կարծես ստիպում է հենց ընթերցողին հանգել անհրաժեշտ եզրակացության: Նա ընթերցողին դարձնում է, կրկնում եմ, ստեղծագործության մեջ իր գործակիցը:

Նույնը կարելի է եւ ասել գեղարվեստական ստեղծագործության այն տեսակի մասին, որ կատակն է: Կատակն անփոխարինելի է, օրինակ, բանավեճի ժամանակ: Ստիպել ունկնդիրներին ծիծաղել նշանակում է նրանց կիսով չափ համոզել սեփական իրավացիության մեջ: Գեղարվեստական պատկերն ու կատակը ստիպում են ընթերցողին կամ ունկնդրին դրանց հեղինակի մտքի ընթացքի մասնակիցը դառնալ:

Ֆրանսիական ասացվածքն ասում է. «Կարեւոր է, որ ծիծաղողները լինեն քո կողմից»: Ում հետ, որ ծիծաղում են՝ վիճաբանության հաղթողն է:

Կատակը կարեւոր է դժվարին իրավիճակներում. դրանով վերականգնվում է հոգեկան հավասարակշռությունը: Սովորաբար կատակի միջոցով քաջալերում էր իր զինվորներին:

Ուստի այնտեղ, որտեղ անհրաժեշտ է ոչ միայն տրամաբանական, այլ նաեւ զգացմունքային համոզմունք, շատ կարեւոր են գեղարվեստական պատկերն ու կատակը: Դրանք կարեւոր են գիտահանրամատչելի աշխատության մեջ եւ ճարտասանական ելույթներում: Յուրաքանչյուր դասախոս գիտի, թե որքան կարեւոր է թուլացած լսարանի ուշադրությունը կատակի միջոցով վերականգնելը: Կատակը նույնիսկ ավելին, քան գեղարվեստական պատկերը, պահանջում է գործուն մասնակցություն. այն ստիպում է ունկնդիրներին ոչ միայն կրավորաբար լսել, այլ նաեւ գործուն կերպով «ընկալել» սրամտությունը:

Սակայն գիտական աշխատության մեջ պատկերավորությունն ու սրամտությունը թույլատրելի են միայն որպես բուն նյութից շեղման մի տեսակ: Գիտական լեզուն իր բնույթով կտրուկ տարբերվում է գեղարվեստական գրականության լեզվից: Այն պահանջում է արտահայտման ճշգրտություն, առավելագույն հակիրճություն, խիստ տրամաբանություն, բացասում է ցանկացած «մտաշահարկում»:

Գիտական լեզվում չպետք է «զգացվի թանաքը». այն պետք է լինի թեթեւ: Գիտական աշխատանքի լեզուն պետք է լինի «աննկատ»: Եթե ընթերցողը գիտական աշխատություն կարդա եւ ուշադրություն չդարձնի՝ այն լավ թե վատ է գրված, ուրեմն այն լավ է գրված: Լավ դերձակը կոստյումն այնպես է կարում, որ այն կրում ենք «առանց նկատելու»: Գիտական շարադրանքի ամենամեծ առավելությունը (այստեղ արդեն խոսում եմ ընդհանրապես շարադրանքի վերաբերյալ, այլ ոչ միայն լեզվի) մտքից միտք անցումների տրամաբանությունն ու հետեւողականությունն են:

Միտքը զարգացնելու կարողությունը ոչ միայն տրամաբանություն, այլ նաեւ շարադրանքի հստակություն է:

Շատ կարեւոր է, որ գիտնականը «զգա» իր ընթերցողին, ստույգ իմանա, թե ում է դիմում:

Անհրաժեշտ է միշտ որոշակիորեն պատկերացնել կամ երեւակայել ապագա աշխատության ընթերցողին եւ, ասես թե, գրի առնել նրա հետ քո ունեցած զրույցը: Թող այդ երեւակայական ընթերցողը լինի թերահավատ, մոլի վիճաբանող, մարդ, որը հակված չէ հավատ ընծայելու որեւէ բանի: Խիստ գիտական աշխատանքում ընթերցողի այդ մտապատկերը պետք է լինի բարձր. երեւակայական ընթերցողը պետք է լինի ներկայացվող ոլորտի մասնագետ: Գիտահանրամատչելի աշխատություններում այդ երեւակայական ընթերցողը պետք է լինի մի փոքր դժվար ընկալող (բայց չափավոր, սեփական ընթերցողին պետք չէ «վիրավորել»): Նման երեւակայական ընթերցողի հետ զրուցելիս գրի առեք այն ամենը, ինչ ասում եք նրան: Որքան ձեր գրավոր լեզուն մոտ լինի խոսակցական լեզվին, այնքան լավ. այնքան այն ավելի ազատ, բազմաձեւ, շեշտադրությամբ առավել բնական կլինի: Գրավոր խոսքին հատուկ դարձվածքները լեզուն ծանրացնում են. դրանք անհրաժեշտ չեն: Սակայն բանավոր լեզուն ունի նաեւ մեծ պակասություններ. այն միշտ չէ, որ ճշգրիտ է, այն տնտեսող չէ, դրանում հաճախադեպ են կրկնաբանությունները: Ուրեմն՝ ձեր խոսքը երեւակայական ընթերցողի համար գրի առնելով՝ անհրաժեշտ է այնուհետեւ այն հնարավորին չափ կրճատել, ուղղել, ազատել անճշտություններից, չափից դուրս ազատ, «խոսակցական» արտահայտություններից: Գիտական աշխատությունը «կսեղմվի», կդառնա հավաք, ճշգրիտ, բայց կպահպանի կենդանի խոսքի շեշտադրումը, եւ ամենակարեւորը՝ դրանից հստակ կդառնա հասցեատերը՝ հեղինակի երեւակայական զրուցակիցը:

Գրավոր լեզվի հարստացումն ու թեթեւությունը հաճախ ծագում են խոսակցական լեզվից: Խոսակցական լեզվից կարելի է փոխառել առանձին բառեր եւ ամբողջական արտահայտություններ: Սակայն անհրաժեշտ է հիշել, որ խոսակցական արտահայտությունները գրական լեզվում ոճաբանական առումով այնքան ուժեղ եւ նկատելի են, որ գիտական ճշգրիտ լեզվում դրանք չպետք է կրկնել միմյանց մոտ:

*Շարունակելի*

**Ռուսերենից թարգմանությունը՝**
**Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ**

# Տարեմուտի խորհուրդը

Տարեմուտի (ամանոր, կաղանդ, տարեգլուխ) տոնակատարությունը մեզ է հասել դարերի խորքից: Ըստ Ս. Գրիգոր Տաթեւացու՝ Բաբելոնյան աշտարակաշինությունից հետո ազգերն իրենց վիճակված վայրը գնալով՝ հեռավոր կամ մոտ գտնվող, այդ օրը որպես տարեմուտ կարգեցին եւ իրենց որդիներին պատվիրեցին պատվել այդ օրը՝ նվերներ տալով: Այս իրադարձությունը դառնում է ազգերի համար ժամանակը հաշվելու սկիզբը: Տարեմուտը նշվել է նաեւ գարնանը՝ բնության զարթոնքի, կամ աշնանը՝ բերքահավաքի շրջանում:

Մեր նախնիները տարեմուտը նշել են Նավասարդի (զենդերեն՝ նավ՝ նոր, սարդ՝ տարի) 1-ին, մեր օրացույցով՝ օգոստոսի 11-ին, այսինքն՝ այն օրը, երբ Հայկ նահապետն իր լայնալիճ աղեղով նետահարեց «գոռոզացած տիտանյան Բելին»: Այսպես սկիզբ է առնում Հայոց բուն թվականը կամ Հայոց հին շարժական տոմարը, որը, ըստ Ղեւոնդ Ալիշանի, համընկնում է ն. Ք. 2492 թվականին, իսկ նորագույն հետազոտությունների հիմամբ՝ ն. Ք. 2341-ին:

Հին Կտակարանում հրեաների՝ եգիպտական գերությունից ազատագրման ամիսն աստվածադիր օրենքով դարձավ տարվա առաջին ամիսը. «Այս ամիսը թող ձեզ համար ամիսների սկիզբը լինի. այն թող տարվա առաջին ամիսը լինի» (Ելք ԺԲ 2), ինչը խորհրդանշում էր հրեաների հոգեւոր նոր կյանքը: Սակայն բուն Նոր տարին՝ պայմանավորված իրադարձությունների կարեւորությամբ, նշվում է նրանց օրացույցի 7-րդ՝ Թիշրի՝ մեր սեպտեմբեր-հոկտեմբերին համապատասխանող ամսին: Հրեական Նոր տարին՝ Ռոշ հաշանան (հայերեն՝ տարեգլուխ), համընկնում է Թիշրի ամսվա 1-ին եւ 2-ին՝ աշխարհի արարմանը, որը, ըստ քրիստոնեական թվագրության, ն. Ք. 5508 թվականն է, իսկ համաձայն եբրայականի՝ ն. Ք. 4004-ը՝ անկախ մերօրյա գիտության՝ աշխարհի տարիքը միլիոնավոր տարիներով թվագրելու փորձերից:

Համաձայն Հին Կտակարանի՝ ոչ միայն տարեմուտին, այլ նաեւ բոլոր ամսագլուխներին՝ ամսվա առաջին օրերին, հատուկ զոհաբերություններ էին սահմանված: Ընդ որում՝ դրանք պետք է ազդարարվեին փող հնչեցնելով: Այսպես՝ սինագոգներում Նոր տարվա առաջին երկու օրերին եղջերափողը հնչեցվում էր հարյուր անգամ, եւ այն ապաշխարության՝ անցած տարին վերարժեւորելու եւ նոր տարվան նախապատրաստվելու խորհուրդն ուներ: Ըստ եբրայական ավանդության՝ Աստված՝ ժամանակի ու կյանքի Տերը, այդ օրերին յուրաքանչյուր մարդու կյանքի շարունակականության վերաբերյալ վճիռ է կայացնում, իսկ մարդն այդ օրերին պետք է աղոթի ու կյանք խնդրի: Այս աղոթքներն աստվածապշտական աղոթքների մեջ ամենաերկարաշունչներից են. սկսվում են վաղ առավոտյան ու տեւում մինչեւ ցերեկ:

Մինչեւ Հուլիոս Կեսարի իրականացրած բարեփոխությունը՝ Հուլյան տոմարը, եւ 1582 թվականին Հռոմի Գրիգոր ԺԳ պապի հաստատած նոր տոմարը Արեւմուտքում կենցաղավարում էր Հռոմեական տոմարը: Ընդ որում՝ հռոմեացիները, որ ժամանակի հաշվարկի սկիզբ էին ընտրել Հռոմի հիմնադրումը՝ ն. Ք. 753 թվականը, այդ տոմարի ստեղծման երախտիքը վերագրում էին Հռոմի հիմնադիր Հռոմուլոսին: Տոմարը նախապես բաղկացած էր 304 օրից՝ 10 ամիսների ամբողջությամբ (մարտից մինչեւ դեկտեմբեր. այս վերջինը, ի դեպ, թարգմանվում է տասներորդ): Ի սկզբանե հռոմեացիները Նոր տարին նշում էին գարնան առաջին օրը՝ մարտի 1-ին. այդ օրը կատարվում էր ձմռան արտաքսման արարողությունը: Ավելի ուշ շրջանում հռոմեացիները հավելեցին եւս 50 օր՝ երկու ամիս. հունվարը, որ դարձավ առաջին ամիսը, կոչվեց ի պատիվ Յանուս դիքի՝ տան դռան եւ քաղաքի դարպասների պահապանի: Յանուսը երկդիմի էր՝ մի դեմքով նայում էր հետ՝ անցյալին, մյուսով՝ առաջ՝ ապագային: Իսկ ն. Ք. 153 թվականից տարեմուտն սկսվում էր հունվարի 1-ից, քանզի կոնսուլները հենց այդ օրն էին ստանձնում իրենց պաշտոնը: Սակայն հունվարի 1-ին արդիական ըմբռնմամբ Նոր տարին նշելու սովորույթը պայմանավորված է քրիստոնեության տարածմամբ եւ Սուրբ Ծնունդով:

Ինչ վերաբերում է քրիստոնեական թվագրությանը, ապա երկար ժամանակ սկիզբ է ծառայել աշխարհի արարումը, այն է՝ ն. Ք. 5508 թվականը: Սակայն Ձ դարում մի կաթոլիկ հոգեւորական՝ Դիոնիսիոս Կրտսերը, տարիներն սկսեց հաշվել Հիսուս Քրիստոսի ծնունդից: Ժամանակը հաշվելու այս սկզբունքը համահունչ էր Կաթոլիկ եկեղեցու տարեկան ծիսական շրջանին, քանզի Նոր տարին՝ հունվարի 1-ը, արդեն ընկնում էր դեկտեմբերի 25-ին նշվող Սուրբ Ծննդյան տոնի 8-րդ օրը: Այս թվագրությունը եւ հունվարի 1-ը՝ իբրեւ տարեմուտ, աստիճանաբար տարածվեցին Գերմանիայում ԺՁ, Ֆրանսիայում ԺԷ, Անգլիայում ԺԸ դարերից:

Ռուսաստանում, որտեղ Նոր տարին նշվում էր սեպտեմբերի 1-ին, Պետրոս Մեծի հրամանով՝ 1700 թվականից սկսյալ, քրիստոնյա մյուս ժողովուրդների օրինակով, հունվարի 1-ը հռչակվում է Տարեմուտ:

Հայաստանում Գրիգորյան տոմարը պաշտոնապես ընդունվում է 1920 թվականին՝ անմիջապես խորհրդային կարգերի հաստատումից հետո. Հայաստանյայց Եկեղեցին այն ընդունում է 1923 թվականին:

Այսօր Ամանորի գլխավոր զարդը՝ երեխաների ուրախության եւ խնդության աղբյուրը, եղեւնին է՝ տոնածառը. այն ոչ թե «ամանորյա տոնածառ» է, այլ «Սուրբ Ծննդյան եղեւնի»:

Թեեւ գերմանական ցեղերը վաղնջական ժամանակներից երկյուղալից վերաբերմունք ունեին եղեւնու նկատմամբ, սակայն նրա խորհուրդը կապված է մի բրիտանացի վանականի հետ, որը կաղնին աստվածացնող գերմանացի դրուիդների հետ բանավիճելիս տապալում է մի կաղնի: Կաղնին ընկնելով կոտրում է կողքի ծառերը՝ բացի մի եղեւնուց, որը եւ վանականը՝ Բոնիֆացիոսը, անվանում է «Մանուկ Հիսուսի եղեւնի»: Հարկ է նշել, որ մինչեւ ԺՁ դարը եղեւնիները, իբրեւ տոնական ծառ, ոչ թե կտրում, այլ տնկում էին Սուրբ Ծննդյան տոներին:

Տոնածառն իր խորհրդով քրիստոնեության մեջ ընկալվում է իբրեւ վերհուշ Կենաց ծառի, որը նախածնողների մեղանչմամբ՝ բարու եւ չարի գիտության ծառի պտուղը ճաշակելու պատճառով, դարձավ անմատչելի ու երանելի բաղձանք մարդկության համար:

Քրիստոնեական աշխարհում եղեւնին կոչվում է նաեւ Սուրբ Ծննդյան ծառ, քանզի խորհրդավորապես կապվում է Կենդանի կենաց ծառի՝ Հիսուս Քրիստոսի հետ: Տոնածառի գագաթը պսակող աստղը բեթղեհեմյան աստղն է, որն Արեւելքից ելած մոգերին առաջնորդում էր դեպի քարայր, որտեղ պիտի ծնվեր Փրկիչը: Եվ ինչպես մոգերն ընծաներ բերեցին մանուկ Հիսուսին, այնպես եւ մենք ենք նվերներ բերում Կենաց ծառին:

ԺՁ դարում Գերմանիայում տոնածառը զարդարում էին գունավոր թղթից պատրաստված ծաղիկներով, մրգերով, ոսկեզօծ առարկաներով, որոնք իրենց ծանրության պատճառով աստիճանաբար դուրս մղվեցին գործածությունից՝ իրենց տեղը զիջելով ապակեգործ արհեստավորների պատրաստած գեղեցիկ սնամեջ խաղալիքներին: Լույսերի մեջ ողողված եղեւնին (նաեւ այսօր գործածվող էլեկտրական լամպերի շղթան) խորհրդանշում է հոգեւոր լույսը, որով Փրկիչը լուսավորեց ողջ աշխարհը: Իսկ բովանդակ՝ փայլփլող ու զարդարուն եղեւնին խորհրդանշում է շնորհների արքայությունը՝ Փրկչի ծննդյամբ աշխարհին պարգեւված:

**Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ**

# Սուրբծննդյան որոշ ավանդույթներ հայոց մեջ

↩ էջ 6

Նրանք հավատում էին, որ այդ բանջարն Աստվածամայրն է քաղել, եւ դրան բուժիչ ու զորեղ հատկություն էին վերագրում:

Քրիստոսի սուրբծննդյան բարի լուրը մարդիկ ստանում էին նաեւ մի խումբ փոքրիկներից, որոնք տնետուն ընկած երգում էին ավետիսներ: Որոշ վայրերում քահանան նշխար էր պատրաստում ու երեխաների հետ տնետուն ընկած բաժանում, հայտնում մեծ ուրախությունը: Համաձայն Գարեգին Սրվանձտյանցի հաղորդած տեղեկության՝ Վանում երեխաներն իրենց հետ վերցնում էին երկարավուն դդում, որի մեջ դնում էին ճրագը եւ կախում տների երդիկներից (տե՛ս *«Հայոց տոնածիսական մշակույթն ըստ գեղանկարչուհի Լուսիկ Ագուլեցու ստեղծագործությունների»*, Երեւան, 2015, էջ 66): Երեխաները երգում էին ավետիս եւ ակնկալում ստանալ ձու, անուշեղեն, թխվածքաբլիթ եւ այլն. իրենց հավաքածը նրանք բաժանում էին աղքատներին կամ խնջույք էին կազմակերպում:

Գյուղերում տարեցներն այցելում էին սգավոր ընտանիքներին՝ իրենց հետ տանելով նվերներ. այդ կերպ փորձում էին վշտակիրներին «հանել սգից»:

Հայերը Սուրբ Ծնունդի երեկոյի հետ կապված տարաբնույթ պատկերացումներ ունեին: Այդ գիշեր հոսող ջրերին վերագրվում էր հատուկ զորություն: Այսպես՝ հավատում էին, որ ջրերը մի ակնթարթ կանգ են

առնում, եւ եթե այդ պահին որեւէ մեկը ինչոր իր է նետում ջուրը, ապա այն, անշուշտ, ոսկյա է դառնում:

Գանձակում ամուլ կանայք Սուրբ Ծնունդի գիշերը երեք անգամ մտնում էին ջուրը՝ հավատալով, որ սրբագործված ջուրն իրենց զավակ կպարգեւի: Քեսաբցիների շրջանում Աստվածորդու ծննդյան գիշերը տարեց կանայք արթնացնում էին պատանիներին, որոնք արագ վազելով՝ գնում, գետից քար էին հանում եւ բերում, դնում էին իրենց պարտեզի ծառերից մեկի տակ, որից մեծ բերք էին ակնկալում: Այս ամենը պարտադիր կատարում էին առանց հետ նայելու. հետո վազում էին տուն, որտեղ արդեն կրակ էր վառված լինում:

Այս ծեսը կատարում էին, որ իրենց պարտեզն առատ բերք տար:

Ջրի հետ կապված ավանդույթներն առհասարակ կարեւորվում էին, քանի որ այդ օրը կատարվում էր Ջրօրհնեքը: Հոգեւորականն այդ օրը խաչով եւ սրբալույս մյուռոնով օրհնում էր ջուրը. մարդիկ հավաքվում էին՝ օրհնված ջուր տանելու: Ջուրն իրենց հետ տանում, խմեցնում էին հիվանդներին կամ քսում նրանց մարմնի ցավող տեղերին: Օրհնված ջրով նաեւ լվանում էին պղծված սպասքը (որոնց շները, մկներն էին դիպել), լցնում էին հացամանների, յուղամանների, ամբարների մեջ, որ երբեք պակասություն չլինի:

Առանձնակի կարեւորվում էր խաչքավորի ընտրությունը. հիմնականում ընտրում էին բարեգործություններ կատարող անձի: Որոշ տեղեկությունների համաձայն՝ Ջրօրհնեքի ժամանակ աղավնիներ էին թռցնում: Այդ օրը կազմակերպում էին բազմաթիվ խաղեր, մրցույթներ եւ այլն: Երբեմն երիտասարդները վազում, ջրի միջից վերցնում էին խաչը եւ չէին վերադարձնում այնքան ժամանակ, մինչեւ խաչքավորը նվեր էր տալիս:

Հայոց մեջ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնը եղել ու մնում է ամենասիրելին եւ տոնելին:

**Գոհարիկ ՂԱԶԱՐՅԱՆ**

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Արփինե Չանթիկյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝ (010) 517 280**
**Էլ. փոստ՝**
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
**web կայք՝**
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.01.2023 թ.
**Տպաքանակը՝ 1225**